
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԸ ԵՎ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ *
(Ծննդյան 100-ամյակի առթիվ)

ՍԵՐՀԱԿ ԱՄԻՐՅԱՆ

1955 թ. սեպտեմբերի 30-ին էջմիածնում գումարված Ազգային-եկեղեցական ժողովը Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք ընտրեց Ռումինիայի և Բուլղարիայի թեմակալ առաջնորդ Գերաշնորհ Տ. Վազգեն (Լևոն-Կարապետ) Աբրահամի եպիսկոպոս Պալճյանին, որը ստացավ Վազգեն Առաջին հոգևոր պատվանունը: 44 տարի նա գլխավորեց Հայ եկեղեցին, եղավ նրա Ոգեղեն Առաջնորդը, հայ աշխարհասփյուռ ժողովրդի իղձերի, տենչերի ու ձգտումների Մեծ Խոսնակը, իր ժողովրդի հավատավոր ծառան ու մունետիկը XX դարի երկրորդ կեսի բարդ ու տարափոխիկ ժամանակներում: Ամենայն Հայոց կաթողիկոսներից այդ նրան էր վիճակված դառնալ դեպի մայրամուտ թեքվող ամբողջատիրական համակարգի հարուցած դառնությունների վերջին կրողը: Վազգեն Առաջինը միաժամանակ այն երջանիկ հայրապետն էր, որը Հայաստանի այնքան երազած անկախության վերականգնման ականատեսն ու մասնակիցը եղավ: Այլ խնդիր է, թե որքան ցավ ու կսկիծ պատճառեցին ծերունագարդ հովվապետին համաժողովրդական ազատագրական պայքարի ալիքի վրա իշխանության եկած նորընծա քաղաքական այրերը:

Հանրահայտ է, որ Ռուսաստանում խորհրդային կարգերի արշալույսին քաղաքական իշխանության եկած բոլշևիկների կողմից ընդունված՝ հոգևոր հաստատությունների, կրոնի ու պետության փոխհարաբերությունները կանոնակարգող դեկրետները և, մասնավորապես, խղճի ազատության, եկեղեցին պետությունից անջատելու մասին, այդպես էլ մնացին թղթի վրա: Գործնականում՝ խղճի ազատությունը հանգեցվեց դրա իսպառ բացակայության, իսկ եկեղեցու կախվածությունը պետությունից՝ մի այնպիսի աստիճանի, որ եկեղեցին իր կատարելիք յուրաքանչյուր քայլը պետք է համաձայնեցնեք պետության հետ, ստանար նրա թույլտվությունը, որ ուղղությամբ էլ այդ քայլը կատարվելու լիներ:

Հանրահայտ է նաև, թե ինչպիսի ատելությամբ էին լցված դեպի եկեղեցին ու նրա սպասավորները Լենինն ու լենինյանները, բոլշևիկյան գաղափարախոսության բոլոր մոլեռանդ հետևորդները: Ինչով էր պայմանավորված կրոնի ու եկեղեցու դեմ բոլշևիկների անհաշտ թշնամանքը, նույնպես հայտնի է՝ զանգ-

* Հոդվածի առանձին դրվագներ արժարծվել են մեր երկու այլ՝ «Վավերագրեր գոյապայքարի և ինքնահաստատման» («Երկիր Նաիրի», 1995, №26, էջ 8-9) և «Վազգեն Առաջին, կաթողիկոսության սկզբնափուլը» («Էջմիածին», 2003, Թ, էջ 49-60) հոդվածներում:

վաճների հոգիներին ու մտքերին տիրելու գերագույն ձգտումով: Իսկ դրա համար հարկավոր էր նրանց միջից դուրս մղել հավատն առ Աստված: Բայց այդ աստելությունն ու թշնամանքը ոչ մեկն այնպիսի մոլագարությամբ չի արտահայտել, ինչպես բոլշևիկների առաջնորդը: Որպեսզի պարզ դառնա կրոնի, եկեղեցու դեմ Ռուսաստանում ծայր առած արշավի օր օրի սաստկացող ծավալները, արշավ, որը չէր կարող իր ազդեցությունը չունենալ նաև Խորհրդային Հայաստանում սկսված նույնահուն գործընթացների վրա, որպեսզի ըմբռնելի լինի Հայ առաքելական եկեղեցու գլխին կախված ահեղ վտանգի աստիճանը, տեղին է հիշատակել ծնված պահից հույժ գաղտնագրված լենինյան գրչին ու մտքին պատկանող մի փաստաթուղթ, որն այդ արշավը բազմապատկելու մոլեռանդ կոչ էր պարունակում: Դա մի նամակ է, որի բովանդակությանը ժամանակին արտոնվել էր ծանոթանալ բացառապես Քաղբյուրոյի անդամներին: Այն հենց այդպես էլ վերնագրված է. «Ընկ. Մոլոտովին՝ Քաղբյուրոյի անդամների համար»: Եվ ապա ավելացված. «Խնդրվում է ոչ մի դեպքում չպատճենահանել, իսկ քաղբյուրոյի յուրաքանչյուր անդամի (ընկ. Կալինինին նույնպես) իրենց գրառումները կատարել հենց փաստաթղթի վրա: Լենին»:

Այս նամակն առաջին անգամ հրապարակվել է Արևմուտքում՝ 1970-ին, և միայն քսան տարի անց ԽՍՀՄ-ում¹: Հայերենով առաջին անգամ մեր կողմից հրապարակվել է 1995-ին²:

Նամակը գրվել է 1922 թ. մարտին: Այդ այն ժամանակ էր, երբ Ռուսաստանում մոլեզնում էր սովը, ոչ այնքան երաշտի, որքան իշխանությունների կողմից քաղաքացիական պատերազմի տարիներից անցկացվող պարենմասնատրման քաղաքականության, համաձայն որի գյուղացիներից անհատույց խլվում էր նրանց աշխատանքի արդյունքը հանդիսացող հացի, այսպես կոչված, ավելցուկը, որն իրականում հացն անմնացորդ խլելուն էր հանգում: 1921–1922 թթ. ձմռանը սովյալների թիվը Խորհրդային Ռուսաստանում արդեն անցնում էր 23 մլն մարդուց: Երկրի ու ժողովրդի համար այս ճակատագրական պահից ահա որոշեց օգտվել պրոլետարիատի առաջնորդը: Նախ, սովի դեմ պայքարի առիթով, Ռուսաստանի կենտգործկոմը 1922 թ. փետրվարի 23-ին դեկրետ հրապարակեց եկեղեցիներում եղած բոլոր արժեքները բռնագրավելու մասին: Համաձայն դեկրետի՝ դրանք պետք է վաճառվեին արտասահմանում ու հաց գնվեր սովյալների համար: Իրականում, սակայն, բուն նպատակը պետական ոսկե ֆոնդի ստեղծումն էր: Այդ մասին պարզ գրում էր Լենինը. «Մեր ձեռքը վերցնել մի քանի հարյուր միլիոն (գուցե և մի քանի միլիարդ) ոսկե ռուբլիների այդ ֆոնդը, մենք պարտավոր ենք ինչ գնով ուզում է լինի: Իսկ անել այդ հաջողությամբ կարելի է միայն հիմա»: Լենինյան գաղափարը հստակ էր: Ժողովուրդը ըմբռնումով կմոտենա, ժողովուրդը չի ընդդիմանա, քանի որ բռնագրավումները տեղի են ունենալու սովի դեմ պայքարի դրոշի տակ: Լենինը բա-

¹ Стéú` Тов. Молотову: для членов Политбюро.– “Собеседник”, 1990, №16, с. 12.

² Стéú` Մ. Հ. Ա մ ի բ յ ա ն. Վավերագրեր գոյապայքարի և ինքնահաստատման.– «Երկիր Նաիրի», 1995, № 26, էջ 8-9:

ցահայտ ցինիկությամբ յուրայիններին՝ Քաղբյուրոյի անդամներին, շարադրում էր իր միտքը. «...ոչ մի այլ պահ, բացի սաստիկ սովից, մեզ չի տա լայն գյուղացիական զանգվածների այդպիսի տրամադրություն», և, հետևաբար. «հենց հիմա, և միայն հիմա, երբ սովի վայրերում ուտում են մարդկանց և ճանապարհներին թափված են հարյուրավոր, եթե ոչ հազարավոր դիակներ, մենք կարող ենք (և հետևաբար պարտավոր ենք) եկեղեցական արժեքների բռնագրավում իրականացնել ամենակատաղի եռանդով...»: Եվ ապա. «...ես գալիս եմ անվերապահ հետևության, որ մենք պետք է հենց հիմա տանք ամենավճռական և ամենադաժան ճակատամարտ սևհարյուրակային հոգևորականությանը և ճնշել նրա դիմադրությունը այնպիսի դաժանությամբ, որպեսզի նա չնոտանա այդ...»: Եվ դարձյալ. «Որքան ավելի մեծ թվով ռեակցիոն բուրժուազիայի և ռեակցիոն հոգևորականության ներկայացուցիչների կհաջողվի մեզ այս կապակցությամբ գնդակահարել, այնքան ավելի լավ: Հարկավոր է հենց հիմա այդ հասարակությանը այնպիսի դաս տալ, որպեսզի մի քանի տասնամյակ շարունակ ոչ մի դիմադրության մասին նրանք մտածել իսկ չկարողանան»³:

Վերոնշյալից պետք է միանգամայն հասկանալի դառնա, թե Խորհրդային Հայաստանում ևս պետական ինչպիսի հզոր մամլիչի տակ պետք է ընկնեին նաև Հայ եկեղեցին, հոգևորականությունը, հավատացյալները: Եթե այս փաստաթղթին ծանոթ լինեին հայ հովվապետերը, կհասկանային, թե որտեղից է գալիս նույն ժողովրդի ծնունդը հանդիսացող, բայց բոլշևիկ արմատականների շարքերը համալրած հայորդիների թշնամանքը իրենց իսկ հայրերի հավատի, այդ հավատը կրողների նկատմամբ և Գևորգ Ե վեհափառ հայրապետը տարակուսանքով ու վրդովմունքով չէր հարցնի. «Մի թե հավատամ, որ հայ բազմատանջ ազգից ելած զավակները, ինչ ծայրահեղ կուսակցության էլ պատկանեն... կոտնահարեն Հայոց Ընդհանրական Հայրապետության ու ս. Էջմիածնի պատմականորեն սրբազրված իրավունքները և գլխավորաբար այս դարավոր հաստատությունների համազգային ու միջազգային հանգամանքն ու բնույթը: Դժվարանում եմ հավատալ...»⁴:

Այլ կերպ չէր կարող լինել, եթե նկատի առնենք, որ Հայաստանում հաստատվել էր նույն քաղաքական ուժը, արմատավորվել նույն գաղափարախոսությունը, գործողության մեջ էին դրվել ուժային նույն լծակները, կիրառվում էին նույն մեթոդներն ու ձևերը: Եվ եկեղեցակրոնական բոլոր գործընթացներն ուղղվում էին նույն հունով, ինչ հունով արդեն երեք տարի ընթանում էին հետհեղափոխական Ռուսաստանում: Մամլիչի ճնշման աստիճանը, սակայն, կենտրոնում (Ռուսաստան) և ծայրամասերում (խորհրդային այլ հանրապետություններ) նույնանիշ չէր: Ազդում էին տեղական յուրահատկությունները: Այդպիսիք առկա էին մանավանդ Հայաստանում: Հնագույն քաղաքակրթություն ունեցող ժողովուրդ և հնագույն քրիստոնեական երկիր, որի եկեղեցին դարեր շարունակ պետականությունից զուրկ լինելու պայմաններում ձեռք էր բե-

³ «Собеседник», 1990, №16, с. 12.

⁴ Մ. Բ. Է. Ի. Բ. Ի. Դ. Ե. Վ. Վազգենյանի հայ եկեղեցու պատմության (1921-1938 թթ.), Երևան, 1994, էջ 20-21:

րել ոչ միայն լայն կրթամշակութային, այլև քաղաքական ու պետական որոշակի գործառնություններով օժտված հաստատության դիմագիծ, ազդեցիկ Սփյուռքի առկայություն...

Նշված գործոնները, անտարակույս, առանձնահատուկ բովանդակություն և դրամատիզմ պետք է հաղորդեին Էջմիածնի ու կոմունիստական վարչակարգի փոխհարաբերություններին: Այդ փոխհարաբերությունների ողջ բարդություն արտացոլվում է նաև Վազգեն Առաջինի կաթողիկոսության տարիներին, նրա գահակալման հենց սկզբից: Ստալինն արդեն չկար, վրա էին հասել, այսպես կոչված, «Խրուշչովյան ձնհալի» տարիները ու չնայած որոշակի լիբերալացման քաղաքականությանը, իրավիճակն արմատապես չէր փոխվել:

Դեռևս 1944 թ. հունիսին, կենտրոնի օրինակով ու թելադրանքով, ՀԿ(բ)Կ - կենտկոմի բյուրոյի որոշմամբ Հայաստանում ևս ստեղծվեց եկեղեցու նկատմամբ պետական վերահսկողությունն ու պետություն-եկեղեցի փոխհարաբերությունն իրականացնող պետական մարմին՝ ՀԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհուրդ (այսուհետև՝ ՀԵԳԽ), որը գործնականում դարձավ նաև պետության կողմից եկեղեցու կառավարումն իրականացնող մարմին: Պետության վերահսկողությունը Հայ եկեղեցու նկատմամբ Վազգեն Առաջինի կաթողիկոսության նախաշեմին հասել էր այնպիսի ծայրահեղության, որ առանց ՀԵԳԽ-ի գիտության ու թույլտվության Էջմիածինը չէր կարող ոչինչ ինքնուրույն ձեռնարկել, մտածել ու գործել: «Էջմիածին» ամսագրի հրատարակման նկատմամբ ՀԵԳԽ-ի վերահսկողությունը, օրինակ, պետական-կուսակցական խորհրդային չափանիշներով անգամ այնպիսի արտառոց ձևեր ու չափեր էր ընդունել, որ ՀԵԳԽ-ի նախագահը, ինչպես նշում էր ոչ այլ ոք, քան ԽՍՀՄ Նախարարների խորհրդին առընթեր Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի (այսուհետև՝ ԿՊԳԽ) նախագահ Դ. Ս. Պոլյանսկին, փաստորեն կատարում էր «Էջմիածին» ամսագրի «գլխավոր խմբագրի գործառնությունը... սեփական ձեռքով ուղղումներ էր կատարում տեքստում, մակագրություններ անում շարելու հանձնված նյութերում, նաև ստորագրում շարվածապաշտանները տպագրության, կատարելով այդ ամենը ամսագրի խմբագրության փոխարեն»⁵:

Փաստերը վկայում են, որ Վազգեն Առաջինի ստացած ժառանգությունը նույնքան ծանր էր, որքան նրա նախորդինը՝ Գևորգ Զ Կաթողիկոսինը: Ավելին. դրությունը ոչ միայն չէր բարեփոխվել, այլև ինչ-որ տեղ ավելի էր վատթարացել: Տարիների ընթացքում լուծման կարոտ խնդիրները չլուծվելով՝ ավելի էին խորացել: Դրանց ավելացել էին նորերը: Տագնապալի վիճակ էր ստեղծվել եկեղեցական թեմերում, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին: Գրեթե կտրվել էր կապը նրանց հետ: Տեղ-տեղ այդ թեմերը, փաստորեն, դադարել էին գործելուց: 1952 թ. հունիսի 21-ից, Գարեգին Ա Հովսեփյանի մահից հետո, թափուր էր մնացել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսական գահը: Նոր կաթողիկոսի ընտրության խնդիրը մեծ ճգնաժամի էր վերածվել: Բուն Մայր Աթոռում կազմա-

⁵ Նորագույն պատմության արխիվ (այսուհետև՝ ՆՊԱ), ֆ. 823, ց. 3, գ. 95, թ. 20:

լուծվել ու գրեթե չէին գործում ամենաանհրաժեշտ կառույցները, չկային հոգևոր սպասավորներ, չկային նյութական միջոցներ...

Էական փոփոխություններ չէին կատարվել նաև կաթողիկոսի տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքյանի՝ Ստալինի հետ 1945 թ. ապրիլի 19-ին հանդիպումից հետո, որը ժամանակին մեծ աղմուկ էր հանել, և այսօր էլ որոշ ուսումնասիրողների կողմից գնահատվում է որպես «մեր ժողովրդի և եկեղեցու պատմության մեջ... շրջադարձային»⁶: Այդ հանդիպման բուն առարկայական արդյունքներն աննշան էին, եթե չասենք՝ ավելին: Չկարողանալով լուծել ստալինյան ռազմավարության հիմնական նպատակին ծառայեցնելու խնդիրը, կապված գլխավորապես Թուրքիայի նկատմամբ հողային պահանջներ ներկայացնելու հետ, այն (հանդիպումը) ի վերջո, Կրեմլի կողմից գերազանցապես ծառայեցվեց որպես Հայ եկեղեցու, իմա՝ նաև ոչ ուս ազգերի ու ազգությունների, նկատմամբ խորհրդային ղեկավարության ջերմ հոգատարության դրսևորման տարիտղման պրոպագանդիստական շարժառիթ, ինչպես երկրի ներսում, այնպես էլ, որ պակաս կարևոր չէր, արտերկրում:

Այդ մասին վկայում էր անգամ ՀԵԳԽ-ի նախագահ Հ. Գրիգորյանը՝ ՀԽՍՀ կառավարության ղեկավարությանը 1956 թ. մարտի 21-ին ներկայացրած տեղեկանքում. Նա նշում էր, որ. կաթողիկոսի տեղապահ Գևորգ Չորեքյանի (հետագայում Գևորգ VI կաթողիկոս) մի շարք խնդրանքներ պարունակող նամակը, որը ժամանակին արժանացել էր Ի. Վ. Ստալինի գրավոր համաձայնությամբ, լայնորեն գովազդվել է «հատկապես արտասահմանյան հայ մամուլում, որպես եկեղեցու նկատմամբ խորհրդային իշխանության բարեհաճ վերաբերմունքի փաստ: Սակայն այդ նամակի մի շարք կետեր, չնայած պաշտոնապես լուծում էին ստացել, գործնականում առ այսօր չեն իրականացվել»⁷:

Գործը հասել էր այնպիսի անհեթեթության, որ պաշտոնապես Էջմիածնին հանձնված վանքապատկան շինությունների դիմաց, որոնք շարունակում էին գրադեցնել մասնավոր բնակիչները, կազմակերպություններն ու գորամասերը և որոնցից կաթողիկոսարանը փաստորեն չէր օգտվում, Էջմիածնից ամեն տարի սկսել էին գանձել պետական հարկ ու տուրք: Վիճակը նույն էր նաև Էջմիածնի տպարանի հարցում, որի բացման թույլտվությունը նույնպես տվել էր անձամբ Ստալինը, իսկ տպարանի շենքը շարունակում էր օգտագործվել պետական հիմնարկների կողմից⁸:

Էջմիածնի կաթողիկոսարանում գործերի ծայրահեղ վատթար վիճակի մասին վկայում էին նաև այլ փաստեր: Մայր Աթոռում Ամենայն Հայոց կաթողիկոսից բացի կային միայն երկու եպիսկոպոսներ, այնինչ մինչև հեղափոխությունը Էջմիածնի միաբանությունը կազմված էր 300 մարդուց, այդ թվում 20-30 եպիսկոպոսից: Նախքան հեղափոխությունը ԽՍՀՄ տարածքում Էջմիածինն ունեցել էր մինչև 900 հայկական եկեղեցի, այժմ դրանց թիվը չէր անցնում 30-ից:

⁶ Տես, օրինակ, Մ տ. Մ տ ե փ ա ն յ ա ն. Հայ Առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Երևան, 1994, էջ 162:

⁷ ՆՊԱ, ֆ. 823, ց. 3, գ. 110, թ. 10:

⁸ Նույն տեղում, թ. 11:

Ընդ որում, խղճալի գոյություն քարշ տվող այդ թեմերից յուրաքանչյուրը իր կազմում ունեւ 2–3 եկեղեցի, սահմանափակ թվով հոգևորականներով...⁹

Այդ հարցերի մասին ցավով գրում էր նաև Վազգեն Առաջինը խորհրդային բարձրագույն իշխանություններին հղած իր նամակներում¹⁰:

Չափազանց ծանր էր նաև Մայր Աթոռի ֆինանսական դրությունը: Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվելուց հետո Վազգեն Առաջինը, ծանոթանալով Մայր Աթոռի ֆինանսական կացությանը, արտառոց փաստի է հանդիպում: ԽՍՀՄ - ֆինանսների նախարարության ոմն վերաքննիչ, դեռևս 1954 թ. այցելելով Հայաստան, ստուգել էր նաև Էջմիածնի Կաթողիկոսարանի հաշվապահական գործերը և ֆինանսական «զանցանքներ էր հայտնաբերել»: Կաթողիկոսարանի կողմից 1953–1954 թթ. ընթացքում պատրաստված մոմերի վաճառքից եկեղեցիների ստացած 1.500 հազար ռուբլի եկամուտը համարելով արտադրական եկամուտ, նա պահանջել էր հանրապետության ֆինանսական մարմիններից հարկադրել Էջմիածնի Կաթողիկոսարանը 1.200 հազար ռուբլու չափով:

Կաթողիկոսարանը կամայական հարկելու վերաբերյալ Վազգեն Առաջինը բողոքի երկու նամակ է հասցեագրում ՀԵԳԽ-ի նախագահին: Ուսումնասիրելով հարցը՝ վերջինս 1956 թ. մարտի 3-ին համապատասխան զեկուցագիր է ներկայացնում ՀԽՍՀ նախարարների խորհրդի նախագահ Ա. Ե. Քոչինյանին: «Անհրաժեշտ եմ գտնում հայտնել, – ասված էր զեկուցագրում, – որ եկեղեցիներում մոմերի վաճառքը չի կարելի համարել արտադրական եկամուտ, քանի որ եկեղեցիներում գնված մոմերի արժեքը... հանդիսանում է հավատացյալների կողմից եկեղեցու ծախսերը հոգալու համար հատկացված գումար: Հենց դա է հանդիսանում Էջմիածնի Կաթողիկոսարանի դրամական մուտքերի գրեթե միակ աղբյուրը (բոլոր միջոցների 90 տոկոսը)... Անգամ այս մուտքերի առկայության պայմաններում՝ Էջմիածնի Կաթողիկոսարանը ի վիճակի չէ ծածկել իր բոլոր ծախսերը, և պարբերաբար նրա բյուջեում ճեղքվածք է առաջանում, որը փակելու համար Կաթողիկոսը նախկինում դիմել է Ալեքսիյ Պատրիարքի և Կառավարության օգնությանը»¹¹:

Հ. Գրիգորյանի վերոհիշյալ զեկուցագրում բերվում էին հետևյալ տխուր փաստերը. «Որպեսզի կարողանա ապահովել... իր տարեկան ծախսերի նվազագույնը, Կաթողիկոսը ստիպված է եղել 1950 թվականին վաճառել իր նյութական արժեքների մի մասը: Էջմիածնի ֆինանսական դրությունն այնքան աղետալի է, որ եթե մինչև այս տարվա վերջը Կաթողիկոսը չստանա լուրջ ֆինանսական աջակցություն, նա պարտադրված կլինի... փակել հոգևոր ճեմարանը և «Էջմիածին» ամսագիրը»¹²:

Օբյեկտիվորեն այս և այլ կարգի բազում հիմնախնդիրներ էին դրված Վազգեն Առաջինի աշխատանքային օրակարգում գործունեության առաջին իսկ օրից: Բոլորը՝ հույժ կարևոր, բոլորը՝ կենսականորեն անհրաժեշտ, ոչ թե Էջ-

⁹ ՆՊԱ, ֆ. 823, ց. 3, գ. 69, թ. 31:

¹⁰ ՆՊԱ, ֆ. 823, ց. 3, գ. 113, թ. 4:

¹¹ ՆՊԱ, ֆ. 823, ց. 3, գ. 113, թ. 19-20:

¹² ՆՊԱ, ֆ. 823, ց. 3, գ. 69, թ. 9, 13-14:

միաձնի նեղ շահերի, այլ հայ ժողովրդի գոյապահպանման ու ազգապահպանման, ազգային ու հոգևոր դիմագծի և կերտվածքի պահպանման տեսանկյունից, մի սրբազան պարտականություն, որից նա ոչ մի կերպ չէր կարող հրաժարվել խորհրդային վարչակարգի ամենաբիրտ ճնշումների պայմաններում անգամ:

Այդ հիմնախնդիրների լուծման հիմնական բանալին, սակայն, Էջմիածնի ձեռքում չէ, որ գտնվում էր, այլ խորհրդային իշխանությունների. շարքայինները, վերը բերված օրինակի կարգի, հանրապետական, մյուսները՝ Կրեմլի: Նման դերաբաշխման պայմաններում Էջմիածնին թողնվել էր խնդրատուի դերը: Եվ Մայր Աթոռը՝ հանձին Ամենայն Հայոց կաթողիկոսի, այդ դերը պարտադրված կատարում էր խորհրդային կարգերի գոյության 70 երկար ու ձիգ տարիների ընթացքում: Այդ դերը բաժին ընկավ նաև Վազգեն Առաջինին:

Էջմիածնից անվերջ հոսքով խնդրագրեր էին ուղղվում իշխանություններին, որոնց գերակշիռ մասը մնում էր անարդյունք: Ժամանակ առ ժամանակ կաթողիկոսի բարձրագրած հարցերը, անցնելով ՀԵԳԽ-ի գրաքննությամբ, ուղեկցվելով դրանց վերաբերյալ կարծիքներով, բացատրագրերով, տեղեկանքներով ու մեկնաբանություններով, վերահասցեագրվում էին հանրապետության և ԽՍՀՄ իշխանությունների բարձրագույն մարմիններին, ինչ-ինչ հարցերի վերաբերյալ մասնակի որոշումներ էին կայացվում, բայց արմատական նշանակության հիմնախնդիրները շարունակում էին մնալ չլուծված:

Վազգեն Առաջինի կաթողիկոսության առաջին մի քանի տարիներին՝ Մայր Աթոռի և անձամբ կաթողիկոսի հեղինակած այս բնույթի փաստաթղթերի թիվը փոքր չէր: Դրանցից յուրաքանչյուրը կատարելով պատմական սկզբնաղբյուրի իր դերը, յուրովի լույս է սփռում Վազգեն Առաջինի գործունեության այս կամ այն կողմի, այս կամ այն հարցի լուծման նկատմամբ նրա մտտեցումների վրա, թույլ է տալիս ինչ-որ չափով վեր հանելու եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների որոշ ծալքերն առանձին ժամանակահատվածում և վերջին հաշվով օգնում հնարավորինս լուսաբանելու այդ հարաբերություններն իր ամբողջության մեջ:

Բայց դրանց թվում կան նաև այնպիսիները, որոնք իրենց նշանակությամբ, բովանդակած տեղեկատվության կարևորությամբ, ժամանակին ունեցած իրենց դերակատարությամբ ու հետևանքներով՝ պատմական եզակի փաստաթղթերի շարքը կարող են դասվել: Այս կարգի մեկ-երկու փաստաթղթերի վերլուծությունը թույլ է տալիս որոշակի պատկերացում կազմել Վազգեն Առաջինի 40-ամյա կաթողիկոսության սկզբնափուլի, նրա մտածումների, ծրագրերի, գործերի ու գործառնության, Հայ եկեղեցու տագնապահարույց վիճակի ու այդ վիճակը շտկելուն ուղղված կաթողիկոսի համառ ջանքերի, պետություն-եկեղեցի հարաբերության հայտնի ու անհայտ երևույթների մասին:

Վազգեն Առաջինի գործունեության առաջին տարիներին վերաբերող այս բնույթի փաստաթղթերից են ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահներ Ն. Ա. Բուլգանինին և Ն. Ս. Խրուշչովին հասցեագրած նրա նամակները, Ն. Ա. Բուլգանինի հետ կաթողիկոսի հանդիպմանն առնչվող նյութերը:

Նորընծա կաթողիկոսը շատ լավ հասկանում էր, որ Էջմիածնի հիմնախնդիրները լուծել հանրապետության իշխանությունների միջոցով՝ նախկինի պես անհնար էր: Ջերմ ցանկության դեպքում անգամ Խորհրդային Հայաստանի ղեկավարությունն առանց Կենտրոնի թույլտվության՝ կարևորություն ներկայացնող ոչ մի հարցի վերաբերյալ վերջնական վճիռ կայացնել չէր կարող: Եվ Վազգեն Առաջինը պարտադրված էր գնալ իր նախորդի ճանապարհով՝ ձգտել անձնական հանդիպման ԽՍՀՄ գործադիր իշխանության բարձրագույն մարմնի՝ Նախարարների խորհրդի նախագահի աթոռը այդ ժամանակ զբաղեցնող Ն. Ա. Բուլգանինի հետ:

Վազգեն Առաջինին հաջողվում է իրականացնել իր ծրագիրը: 1956 թ. փետրվարին Հայ եկեղեցու արտասահմանյան թեմերը այցելելու նպատակով ուղևորության պատրաստվող Կաթողիկոսն իրեն ընդունելու խնդրանքով դիմում է Բուլգանինին: Պահը ճիշտ էր ընտրված: Նոր էր ավարտել իր աշխատանքները ԽՄԿԿ XX համագումարը, որը, ի թիվս այլ հարցերի, քննարկել էր Ստալինի անձի պաշտամունքի և նրա հետևանքների հաղթահարման մասին հարցը: Անհատի պաշտամունքը մերկացնող Ն. Ա. Խրուշչովի գլխավորած խորհրդային նոր վարչակազմը չէր կարող չընդառաջել Հայ եկեղեցու ղեկավարի ցանկությանը, ում դրանից տասնմեկ տարի առաջ չէր զլացել ընդունելու նույն այն անհատը, որի պաշտամունքը դատապարտեց ԽՄԿԿ համագումարը:

Կաթողիկոսի խնդրանքը ընդունելության վերաբերյալ չի մերժվում: Հանդիպումը կայանում է 1956 թ. մայիսի 12-ին՝ կաթողիկոսի արտասահմանյան ուղևորություն կատարելուց անմիջապես հետո: Հանդիպման հենց սկզբում Վազգեն Առաջինը Բուլգանինին է հանձնում երկու նամակ-ուղերձ¹³: «Դրանցից մեկը, – ասում է Կաթողիկոսը, – ես գրել եմ արտասահման մեկնելուց առաջ: Նրանում ես առաջ եմ քաշում մի շարք խնդիրներ և խնդրում եմ Միութենական կառավարությանը օգնել Հայկական Եկեղեցուն այդ խնդրանքների դրական լուծման գործում: Երկրորդը՝ ես կազմել եմ հապճեպ, արտասահմանից վերադառնալուց հետո, վերջին 2–3 օրում: Այդ փաստաթղթում ես աշխատել եմ շարադրել արտասահմանի հայության խոհերն ու ձգտումները և Խորհրդային կառավարության ուշադրությանը ներկայացնել մի քանի հարցեր, որոնք ինձ նույնպես հուզում են»¹⁴:

Մեր համոզմամբ, երկրորդ նամակը Վազգեն Առաջինը նույնպես կազմել էր արտասահմանյան ուղևորությունից առաջ և գրաքննությունից ու իշխանությունների միջամտությունից զերծ պահելու նպատակով հրապարակ չէր հանել: Նամակի հիմնական բովանդակությունից, որը մանրամասնված է Բուլգանինի հետ կաթողիկոսի գրույցի արձանագրությունում, պարզ է դառնում երկրորդ

¹³ Վազգեն Առաջինի Բուլգանինին հասցեագրած երկու նամակները ժամանակին հրապարակվել են ՊԲՀ-ում. տե՛ս՝ ՊԲՀ, 2000, № 2, էջ 249–255: Նամակների վրա նշված ամսաթվերը, սակայն (12 մայիսի 1956 թ.), չեն համապատասխանում փաստաթղթերի ստեղծման ժամանակին: 1956 թ. մայիսի 12-ին կայացել է կաթողիկոսի հանդիպումը Բուլգանինի հետ, իսկ նամակները գրվել են ավելի վաղ (մանրամասները՝ սույն հոդվածում):

¹⁴ ՆՊԱ, ֆ. 823, ց. 3, գ. 110, թ. 7:

նամակի ծնունդի բուն շարժառիթը: Ձերծ գրաքննությունից ու վերահսկողությունից, նրանում Վազգեն Առաջինը ազատորեն շարադրել էր այն հարցերը, որոնք նա չէր կարող ներառել առաջին նամակում: Նամակում արտացոլված էր ողջ հայությանը հուզող՝ հայկական պատմական տարածքների վերադարձման հիմնախնդիրը: Կաթողիկոսը, ազգայնականության մեջ մեղադրանքներից ու պիտակումներից խուսափելու համար, խնդիրը ներկայացնում էր կապելով այն բացառապես սփյուռքահայության ձգտումների ու ցանկությունների հետ:

Վազգեն Առաջինի գրույցը Բուլզանինի հետ նրան ներկայացված երկու նամակներում շոշափվող խնդիրների շուրջ էր: Անտարակույս, ԽՍՀՄ կառավարության նախագահը նախապես քաջաձանոթ էր կաթողիկոսի առաջին նամակի բովանդակությանը, որը, անկասկած, վաղօրոք նրան էր ուղարկվել ՀԵԳԽ-ի և ԿՊԳԽ-ի միջոցով, ինչը չէր կարելի ասել երկրորդ նամակի մասին, որն առանց այդ մարմինների գիտության էր հանձնվել Բուլզանինին: Այնպես որ հանդիպման ժամանակ Բուլզանինն արդեն ուներ առաջին նամակում առաջադրված հարցերի պատրաստի պատասխանները: Հանդիպման և գրույցի արդյունքում Վազգեն Առաջինի առաջին նամակում արձարծված՝ Էջմիածնին հուզող խնդիրներից ոչ մեկը չմերժվեց: Դրանց մեծ մասն անհապաղ լուծելու, իսկ մնացած հարցերն ուսումնասիրելու և դրանց լուծմանը ընդառաջելու միանշանակ խոստումներ տրվեցին:

Այլ էր Բուլզանինի վերաբերմունքը երկրորդ նամակում պարունակած հիմնախնդիրների նկատմամբ: Ամենայն Հայոց կաթողիկոսը ԽՍՀՄ կառավարության առջև հարց էր բարձրացնում քայլեր ձեռնարկել.

ա. ժամանակին Հայաստանից օտարված հայկական հողերը՝ Ադրբեջանական ԽՍՀ կազմում ընդգրկված Լեռնային Ղարաբաղի Բնքնավար Մարզն ու Նախիջևանի Բնքնավար Հանրապետությունը, Վրացական ԽՍՀ կազմում ընդգրկված Աքալքալաքի շրջանն ու Թուրքիայի կողմից բռնազավթված Արևմտյան Հայաստանը Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորելու միջոցով դրանց իսկական տիրոջը՝ հայ ժողովրդին վերադարձնելու ուղղությամբ,

բ. կազմակերպելու սփյուռքահայերի նոր հայրենադարձություն:

Ամենայն Հայոց հայրապետը չի սահմանափակվում ընդհանրական գաղափարների շարադրմամբ: Նա մասնավորեցնում է իր միտքը՝ պարզելով, թե ինչ տարածքների մասին է խոսքը: «Մասնավորապես դա վերաբերում է Նախիջևանի երկրամասին, – ասում է նա, – որտեղ ես անձամբ եղել եմ և լավ ծանոթ եմ երկրամասին: Այդ շրջանը խիստ նոսր է բնակեցված և բացի այդ բարձիրթողի վիճակում է: Այն թողնում է ծանր տպավորություն: Ոչ մի շինարարություն այնտեղ չի կատարվում: Որոշ միջոցառումներ անցկացնելու դեպքում այնտեղ կարելի է տեղավորել զգալի թվով հայրենադարձների»¹⁵: Արժարծելով հայկական հողերի վերադարձման խնդիրը, կաթողիկոսը ստիպված էր խաղալ միանգամայն բաց խաղաքարտերով. «Համարձակվում եմ ասել, որ այդ հարցը ես դնում եմ ինչպես հայ, այնպես էլ ռուս ժողովրդի շահերից ելնելով»¹⁶: Դա

¹⁵ ՆՊԱ, ֆ. 823, ց. 3, գ. 110, թ. 4:

¹⁶ Նույն տեղում:

թափանցիկ ակնարկ էր առ այն, որ անդրկովկասյան երեք հանրապետությունների սահմանների պահպանումը ներկա վիճակում վաղ թե ուշ կգործի նաև Ռուսաստանի դեմ: Վերջին տարիների իրադարձությունները երիցս համոզում են դրանում:

Ամենայն Հայոց կաթողիկոսը, անտարակույս, չէր կարող չգիտակցել, որ իր երկրորդ նամակում առաջ քաշված հիմնախնդիրները չէին կարող անմիջապես լուծվել: Բայց շարունակելով իր նախորդների գործը, նպատակ ունենալով «տաք» վիճակում պահել դրանք, թույլ չտալ մոռացության մատնվելու և երբ գար հարմար պահը, իսկ նա հայրենի հողին բոլոր նվիրյալների նման հավատում էր, որ, վերջիվերջո, այդ պահը գալու է, այդ խնդիրների քաղաքական լուծումը ապահովելու կոչված իրավասու պետական այրերը պատրաստ լինեին դրան, հանկարծակիի չգային և համարձակություն ունենային բախտորոշ վճիռ կայացնելու: Եվ երբ Բուլգանինը, ինչպես և սպասվում էր, կտրուկ չմերժելով հանդերձ կաթողիկոսին, կասկած է հայտնում ներկա պահին այդ հարցերը բարձրացնելու և լուծելու նպատակահարմարության մասին, Վազգեն Առաջինը անկեղծորեն պատասխանում է, որ ինքն իր պարտքն է համարում այդ ամենի մասին գրել՝ ամեննին չմտածելով, որ այդ հարցերը կարող են արագ լուծվել: «Ես գիտեմ այդ հարցերի բարդությունը, – ասում է նա, – և գրել եմ այն հաշվով, որ Ձեր ուշադրությունը դարձնեմ այդ հարցերի վրա: Ես ուզում եմ հուսալ, որ երբ հնարավորություն ընձեռվի, միութենական կառավարությունն անհրաժեշտ միջոցներ ձեռք կառնի այդ հարցերի լուծման համար»¹⁷: 1988-ին ստեղծվեց այդպիսի հնարավորություն՝ սահմանադրական ճանապարհով լուծելու Հայ դատի մի կնճիռը՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայաստանի հետ վերամիավորելու հարցը: Մակայն խորհրդային հասարակության «արմատական վերակառուցմանը» ձեռնամուխ եղած գործաչույան վերնախավը ոչ միայն քաղաքական իմաստություն ու համարձակություն չունեցավ մեկընդմիջտ վճռելու այն, այլև իրարամերժ ու շփոթ որոշումներով խոր ու պայթյունավտանգ փակուղի մտցրեց խնդիրը, որի հանգուցալուծման համար արյուն ու քրտինք է շարունակում թափել մեր ժողովուրդը արդեն երկու տասնամյակ:

Ինչ վերաբերում է Բուլգանինի հետ Վազգեն Առաջինի հանդիպման վերջնական արդյունքներին, ապա շատ ժամանակ չպահանջվեց, որպեսզի Էջմիածինը մի անգամ ևս համոզվի ԽՍՀՄ առաջին դեմքերի տված խոստումների սնանկության մեջ: Հանդիպման ավարտին երկուստեք ասված ջերմ խոսքերը շարունակություն չունեցան և չամրապնդվեցին կոնկրետ գործերով:

Բուլգանինի հետ հանդիպելուց և իր առաջ քաշած հարցերի մի զգալի մասին դրական պատասխան ստանալուց հետո, Վազգեն Առաջինը հավատացած էր, որ դրանք կարճ ժամանակում լուծում կստանան: Իսկ չհավատալ, չնայած իր նախորդի դառը փորձին, ըստ երևույթին, չէր կարելի: Փոխվել էին ժամանակները, փոխվել էր խորհրդային ղեկավարությունը: Խոստումներ տվողն էլ որոշակիորեն բարեփոխված երկրի գերագույն գործադիր մարմնի ղեկավարն էր: Հավատում էր այնքան, որ խորհրդային ղեկավարության կողմից հավա-

¹⁷ Նույն տեղում, թ. 5:

նության արժանացած՝ Հայ եկեղեցում կատարվելիք բարեփոխումների իր ծրագրերի մասին «պատմում էր բոլորին, գրում էր նամակներում, հնչեցնում էր եկեղեցական քարոզների ժամանակ»¹⁸:

Չնայած այս ուղղությամբ ձեռնարկած նրա քայլերը կարող են նաև այլ բացատրություն ունենալ: Բուլզանինի հետ տեսակցության և նրա հետ ունեցած գրույցի բովանդակության վերաբերյալ տեղեկատվության հրապարակման վրա արգելք դնելու և այն ամբողջությամբ գաղտնագրելու իշխանությունների որդեգրած քաղաքականությունը կարող էր կասկածներ առաջացնել գործերի բարեհաջող ընթացքի վերաբերյալ: Եվ կաթողիկոսը սեփական նախաձեռնությամբ ու միջոցներով հայ հոգևորականությանն ու ժողովրդին իրազեկ էր դարձնում իրերի վիճակի մասին, այդ կերպ լուծելով նաև շատ ավելի կարևոր մի այլ խնդիր՝ ներագրելու իշխանությունների վրա կատարելու տված խոստումները: Բայց խոստումները, այդուհանդերձ, չէին կատարվում: Նման պայմաններում այլ ելք չէր մնում, քան բոլոր միջոցներով պայքարելու՝ երկրի բարձրագույն իշխանություններից պայքարով կորցած խոստումների իրականացման համար: Անհավասար պայքարի այս նոր փուլը՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի և խորհրդային իշխանությունների միջև շատ ավելի դժվար էր, շատ ավելի դառն ու երկարատև: Առաջինի կողմում արդարությունն էր, իր ժողովրդին ծառայելու անսահման մղումն ու անկոտրում կամքը, երկրորդի՝ ուժը:

1956 թ. երկրորդ կեսից սկսած՝ Վազգեն Առաջինը մի քանի անգամ տեսակցություն և գրույց է ունենում ՀԽՍՀ նախարարների խորհրդի նախագահ Ա. Քոչինյանի և ՀԵԳԽ-ի նախագահ Հ. Գրիգորյանի հետ: Ա. Քոչինյանի հետ կաթողիկոսի հանդիպումների ժամանակ կայացած գրույցների սղագրությունների բացակայությունը թույլ չեն տալիս հստակորեն պարզելու քննարկվող բոլոր հարցերի (իսկ քննարկվող հիմնական հարցերի շրջանակը հայտնի էր) վերաբերյալ Ա. Քոչինյանի իրական դիրքորոշումը: Բայց որ Ամենայն Հայոց կաթողիկոսի հաճախակի դարձած հանդիպումները նրա հետ արդյունավետ էին ու տալիս էին իրենց պտուղները, ակնհայտ էր: Այս առումով ամեննին պատահական չէր, որ Խորհրդային Ադրբեջանի կազմում անօրինականորեն ներառված հայկական տարածքները՝ Նախիջևանն ու Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին վերադարձնելու Բուլզանինի առջև Վազգեն Առաջինի բարձրացրած հարցին, տասնմեկ տարի անց՝ 1966 թ. սեպտեմբերի 30-ին, անդրադառնում է հենց Ա. Քոչինյանը, որն ընդամենը 9-րդ ամիսն էր, ինչ զբաղեցնում էր ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղարի աթոռը:

Ա. Քոչինյանի հետ կաթողիկոսի հանդիպումները զգալի չափով արդյունավետ էին: 1957 թ. հուլիսի 18-ին ՀԽՍՀ կառավարության նախագահը ստորագրում է կարգադրություն, որով, հիմք ընդունելով «Կաթողիկոս Վազգեն Առաջինի միջնորդությունը և Հայ եկեղեցու գործերի խորհրդի եզրակացությունը, բավարարվում է Հայ լուսավորչական հավատացյալների խնդրանքը երեք եկեղեցիների բացման մասին»: Դրանք էին՝ Ստեփանավան քաղաքի, Բասարգեչարի (Վարդենիս) շրջանային կենտրոնի եկեղեցիները և Գորիսի շրջանի

¹⁸ Նույն տեղում, թ. 58:

Տաթևի վանքը: Կարգադրության համաձայն՝ «նշված եկեղեցիների շենքերը հանձնվում էին հավատացյալների կրոնական արարողություններ կատարելու համար...»¹⁹:

Ա. Քոչինյանի հետ 1958 թ. հունիսի 8-ին կայացած հերթական հանդիպման ժամանակ, նա տալիս է «իր բարյացակամ համաձայնությունը, որպեսզի Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցու բակում գտնվող գյուղական 10-ամյա դպրոցի շենքը հետագայում ազատվի և հանձնվի Մայր Աթոռին, թանգարանի վերածելու համար»²⁰: Ըստ Վազգեն Առաջինի մտահղացման՝ թանգարանը նվիրվելու էր «Մեսրոպ Մաշտոցի կյանքին ու գործունեությանը և առհասարակ հայ դպրությանն ու մատենագրության պատմությանը»:

Նույն խնդրանքը, ի թիվս այլ հարցերի, կրկնվում է Կաթողիկոսի շուրջ մեկ տարի անց՝ 1959 թ. ապրիլի 6-ին Ա. Քոչինյանին ուղարկված մի այլ նամակում: Հայաստանի ազգային արխիվում պահպանվող սույն փաստաթղթի լուսանկարում, տվյալ հարցի դիմաց ձեռագրով նշված է. «Թանգարանը պետք է կազմակերպվի պետական միջոցներով»²¹: Հասկանալի է, որ այսպիսին է եղել ՀԽՍՀ կառավարության նախագահի կայացրած որոշումը: Տարիներ անց թանգարանը կյանքի կոչվեց: Այն այսօր էլ գործում է: Այսինքն՝ կարելի էր արձանագրել, որ համար պայքարի ու ներդրված ջանքերի գնով որոշակի դրական տեղաշարժեր եկեղեցական գործում առկա էին:

Սակայն կաթողիկոսի առաջ քաշած ու Ա. Քոչինյանի համաձայնությանն արժանացած ոչ բոլոր խնդիրներն էին, որ կենսագործվեցին: Մանավանդ որ Բուլղանիի տված հիմնական խոստումները չէին կատարվել: Ելնելով դրանց հույս կարևորությունից՝ այս հարցը շոշափվում էր կաթողիկոսի՝ իշխանությունների ներկայացուցիչների հետ կայացած բոլոր հանդիպումների ժամանակ: Այն հիմնականներից մեկն էր նաև այն երկարատև գրույցի, որ կայանում է 1956 թ. սեպտեմբերի 18-ին Վազգեն Առաջինի և ՀԵԳԽ-ի նախագահ Հ. Գրիգորյանի միջև²²: Մի շարք առումներով հատկանշական այս գրույցի վրա հարկ ենք համարում կանգ առնել քիչ ավելի հանգամանալից:

Առաջնորդվելով «մինչև վերջ անկեղծ լինելու» իր հավատամքով՝ կաթողիկոսն ամենից առաջ իր մտահոգությունն է հայտնում այն անորոշ կացության կապակցությամբ, որ ստեղծվել էր Մայր Աթոռի ու պետության փոխհարաբերություններում՝ Հայ եկեղեցու անհետաձգելի լուծում պահանջող հարցերի կենսագործումը ձգձգելու առնչությամբ: Նա ասում է, որ ինքը ինչ-որ չափով հիասթափված է, ու համոզված չէ, որ այն ամենը, ինչ խոստացվել է իրեն՝ կկատարվի: Իսկ դա կարող է բացասաբար անդրադարձնալ իր հեղինակության և այն ամեն գործերի վրա, ինչը ինքը մտադիր է իրականացնել Հայ եկեղեցու բարենորոգման ուղղությամբ: Եվ փաստարկում է. ինքը Բուլղանիին է ներկայացրել յոթ խնդրանք, բոլորին ստացել է դրական պատասխան: Նույնպիսի

¹⁹ ՆՊԱ, ֆ. 823, ց. 3, գ. 120, թ. 6:

²⁰ ՆՊԱ, ֆ. 823, ց. 1, գ. 171, թ. 31:

²¹ Նույն տեղում, թ. 50:

²² ՆՊԱ, ֆ. 823, ց. 3, գ. 110, թ. 57-62:

դրական պատասխան ստացել է նաև Ա. Քոչինյանից: Ոգևորված այդ խոստումներից՝ ինքն այդ մասին իրազեկել է հայ հոգևորականությանն ու հավատացյալ ժողովրդին: Բայց անցել են ամիսներ, իսկ տրված խոստումները չեն կատարվել:

ՀԵԳԽ-ի նախագահը հավատացնում է, որ կաթողիկոսի կասկածներն անտեղի են, որ առաջ քաշված բոլոր հարցերն անպայման դրական կլուծվեն: Վազգեն Առաջինը, որպես տրված խոստումների կատարման երաշխիք, առաջ է քաշում Բուլգանինին հասցեագրած իր առաջին նամակը «Էջմիածին» ամսագրում հրապարակելու գաղափարը: «Եթե նամակում բարձրացված հարցերը, իրոք, պետք է դրականորեն լուծվեն, ապա ոչ մի անհրաժեշտություն չկա այն գաղտնի պահելու ու դրանով ամենատարբեր մեկնությունների տեղիք տալու: Ընդհակառակը, այդ փաստաթղթի հրապարակումը և նրանում Կաթողիկոսի առաջ քաշած հարցերի կենսագործումը խիստ կբարձրացնի Էջմիածնի կաթողիկոսարանի հեղինակությունն ու դրական տեսանկյունից կներկայացնի Խորհրդային Կառավարության վերաբերմունքը եկեղեցու նկատմամբ»²³: Բուլգանինին հասցեագրած իր առաջին նամակի հրապարակման անհրաժեշտությունը կաթողիկոսը հիմնավորում է նաև սփյուռքահայության մեջ այդ նամակի բովանդակության մասին տարածվող կեղծ ու վնասաբեր լուրերով, որ, իբր, նրանում շարադրված է արտասահմանյան շրջագայության վերաբերյալ կաթողիկոսի հաշվետվությունն ու ինչպես է նա կատարել խորհրդային կառավարության կողմից ստացած հանձնարարությունները:

ՀԵԳԽ-ի նախագահին Վազգեն Առաջինը հայտնում է նաև իր մի այլ մտահոգության մասին: Հայ եկեղեցու թեմերում, ինչպես, օրինակ, Վրաստանի, կան եկեղեցական սքեմ հազած անձիք, որոնք չարաշահում են իրենց դիրքը, անհարիր վարքով վարկաբեկում են Հայ եկեղեցին, իսկ ինքը չի կարողանում նրանցից ազատվել, որովհետև, ստացված տեղեկությունների համաձայն, նրանք սերտ հարաբերություններ ունեն անվտանգության մարմինների հետ և վայելում են իշխանությունների հովանավորությունը: Հ. Գրիգորյանն այս հարցի կապակցությամբ աշխատում է հավաստիացնել կաթողիկոսին, որ նրա տեղեկությունները հավաստի չեն կարող լինել, քանի որ, որքան իրեն է հայտնի, «եկեղեցու սպասավորներին որպես անվտանգության մարմինների իրազեկիչ օգտագործելը մեզ մոտ չի կիրառվում, և, նույնիսկ, արգելված է»²⁴:

Իր այս հավաստիացումը, ըստ Գրիգորյանի, շատ է ուրախացնում կաթողիկոսին: Տարօրինակ է, որ նա եկել էր այդպիսի եզրակացության. Վազգեն Առաջինի պատասխանից այդպիսի հետևության հանգել ոչ մի կերպ չէր կարելի: Հազիվ թե Ամենայն Հայոց կաթողիկոսին հավատ ներշնչեին իշխանության բարձրաստիճան այս ներկայացուցչի հավաստիացումները, որն այլ դիրքորոշում չէր էլ կարող ունենալ: Ընդհակառակը, կաթողիկոսի պատասխանում հնչած ակնարկը միանգամայն այլ բանի մասին է վկայում. «Դա շատ լավ է և իմաստուն է, եթե, իրոք, այդպես է (ընդգծումը մերն է. – Ս. Ա.), քանզի այդ կար-

²³ Նույն տեղում, թ. 59:

²⁴ Նույն տեղում, թ. 61:

գի կրկնակի ծառայությունը մարդկանց միայն այլասերում է, իսկ գործնական արդյունք տալ չի կարող, քանի որ մեզ մոտ այնպիսի փոխհարաբերություններ են ձևավորվել, որ ոչ մի գաղտնիք Կառավարությունից մենք չունենք և ցանկացած տեղեկատվություն կառավարական մարմինները կարող են ստանալ անմիջականորեն մեզնից, չդիմելով հատուկ իրազեկիչների օգնությանը»²⁵:

Վազգեն Առաջինի խոսքերում, փաստորեն, թափանցիկ մեղադրանք է հնչում իշխանությունների հասցեին՝ Հայ եկեղեցու թեմերում «կրկնակի ծառայություն» կատարող, «մարդկանց միայն այլասերող» իրազեկիչներ ներդնելու և Հայ եկեղեցին ու հայ հոգևորականությանը վարկաբեկող քաղաքականություն վարելու համար և քրիստոնեական հորդոր նման քաղաքականությունից հրաժարվելու:

Քննարկվող թեմաներից երկրորդը՝ Հայ եկեղեցու արտասահմանյան թեմերում և, ամենից առաջ, Կիլիկիայի կաթողիկոսարանում ու Երուսաղեմի պատրիարքարանում ստեղծված վիճակն էր՝ կապված Մեծի Տան Կիլիկիո կաթողիկոսի ընտրությունների հետ:

Խորհրդային իշխանությունների կողմից ժամանակի ընթացքում եկեղեցու նկատմամբ որդեգրված երկակի քաղաքականության շրջանակներում՝ երկրի ներսում բռնաճնշումների ու սահմանափակումների, արտերկրում նրա հնարավորություններն ի շահս օգտագործելու, պահանջվում էր ըստ հնարավորին ամրապնդելու Էջմիածնի դիրքերը հայաշատ գաղթօջախներ ունեցող արտասահմանյան երկրներում և, ժամանակի թելադրանքով, ամենից առաջ Մերձավոր Արևելքում: Հենց այս ուղղությամբ կուսակցական և խորհրդային մարմինների կատարած աշխատանքների մասին էր նշում ԿՊԳԽ-ի նախագահ Ա. Պուզինը ԽՍՀՄ դեկավարությանը ներկայացրած տեղեկանքում. «ԽՄԿԿ Կենտկոմը, Հայաստանի կոմկուսի կենտկոմը, ԽՍՀՄ արտաքին գործերի Նախարարությունը և ԿՊԳԽ-ն մի անգամ չէ, որ քննարկել են խորհրդային ազդեցությունը արտասահմանյան երկրների հայ ազգաբնակչության մեջ ուժեղացնելուն վերաբերող հարցերը և դրանց վերաբերյալ ընդունել են համապատասխան որոշումներ»²⁶:

Պուզինը «մոռանում է» նշել, որ այդ ազդեցության ուժեղացումը խորհրդային իշխանություններն աշխատում էին իրականացնել գլխավորապես Էջմիածնի օգնությամբ ու միջոցով: Խորհրդային իշխանությունների երկակի, ծայրաբևեռ քաղաքականությունը Էջմիածնի վերաբերմամբ, ի վերջո, բումերանգի դեր էր կատարում, շատ հաճախ հասցնելով ճիշտ հակառակ արդյունքի՝ անվստահություն առաջացնելով սփյուռքահայության մի զգալի մասի, Սփյուռքում գործող քաղաքական ուժերի և, ամենից առաջ՝ Դաշնակցության մեջ՝ խորհրդային իշխանությունների ու խորհրդային կարգերի նկատմամբ, հեղինակազրկում էր Մայր Աթոռն ու Ամենայն Հայոց կաթողիկոսին, անուղղելի վնաս հասցնում Սփյուռք-Հայրենիք հարաբերությունների սերտացման գործընթացին: Չխորանալով մանրամասների մեջ՝ նշենք, որ այդ քաղաքակա-

²⁵ Նույն տեղում, թ. 61–62:

²⁶ ՆՊԱ, ֆ. 823, ց. 3, գ. 150, թ. 4:

նության հակազդեցությունն էր Հայ եկեղեցու ցավալի պատակտման հիմնական պատճառը, որ կատարվեց Մեծի Տան Կիլիկիո կաթողիկոսի ընտրությունների ընթացքում ու արդյունքում: Այդ մասին մի առանձին դառնությամբ և անթաքույց վրդովմունքով գրում էր Վազգեն Առաջինը՝ խորհրդային ղեկավարությանը հասցեագրած իր նամակում. «Քաղաքական միջամտությանը ճնշումին տակ, և հակառակ մեր հավատացյալ ժողովուրդի կամքին, պարտադրվեցավ Ս. Էջմիածնից բաժանումը Անթիլիասի կեդրոնին... Գրեթե ամեն տեղ նույն մեթոդները գործադրվեցան, այն է՝ ցույց տալ Ս. Էջմիածինը որպես սովետական ազդեցության պրոպագանդի կեդրոն, ցույց տալ Ս. Էջմիածնի հավատարիմ հայ ժողովուրդին իբրև քաղաքականապես անվստահելի տարր հաջա այն պետությանց, ուր կապրին նրանք»²⁷:

Սրտի անհուն ցավով թղթին հանձնված այս տողերը համապատասխանում էին իրականությանը: Այսպիսի պայմաններում էր, որ Հայ եկեղեցին որպես ԽՍՀՄ գաղափարաքաղաքական ազդեցությունն արտերկրում ուժեղացնելու ներգործուն լծակ օգտագործելու կոմունիստական վարչակարգի քաղաքականությանը բոլոր հնարավոր միջոցներով ընդդիմանալու, այդ քաղաքականությունից հայ եկեղեցուն հասցվող վնասները նվազագույնի հասցնելու և նույն այդ քաղաքականությունը ըստ հնարավորին ի շահս օգտագործելու դժվարագույն խնդիրներն էր ճգնում լուծել Ամենայն Հայոց կաթողիկոսը՝ Մայր Աթոռ-խորհրդային իշխանություններ մշտաժողով հարաբերություններում: «Եթե ես մինչև վերջ համոզված լինեի, – ասում է նա ՀԵԳԽ-ի նախագահին, – որ իմ բոլոր ծրագրերը Հայ եկեղեցու բարենորոգման ուղղությամբ ԽՍՀՄ ներսում կհաջողվի իրականացնել, ես ավելի վճռական կգործեի արտասահմանյան գործունեության հետ կապված բոլոր գործերում»²⁸:

Ինչպե՞ս կարող էր իր ծրագրերի իրականացման մեջ համոզված լինել կաթողիկոսը, երբ իշխանությունները նրան զրկել էին անգամ սփյուռքահայ գրականությունն ու մամուլը կարդալու, ասել է թե՛ արտերկրի հայ համայնքների կյանքի զարկերակը զգալու հնարավորությունից: Վազգեն Առաջինը պարզաբանում էր, որ վաղ թե ուշ Հայ եկեղեցու արտասահմանյան գործիչներն իրեն կհանդիմանեն, որ տվել է շատ խոստումներ և ոչինչ չի արել ԽՍՀՄ ներսում, միայն կոչեր է հնչեցնում արտասահմանին ուղղված:

Վերոնշյալ հարցերի առնչությամբ կաթողիկոսի բերած փաստարկներն այնքան համոզիչ էին, որ ՀԵԳԽ-ի նախագահը երկու միջնորդագիր է ներկայացնում հանրապետության ղեկավարությանը: Իշխանությունների գործելակերպը Էջմիածնի նկատմամբ երևան հանելու առումով ուշադրության է արժանի հասկապես դրանցից առաջինը: Այն մեջբերում ենք ամբողջությամբ. «Կաթողիկոս Վազգեն Առաջինը մի քանի անգամ դիմել է Հայ եկեղեցու գործերի խորհրդին, խնդրելով թույլ տալ իրեն կարդալու Էջմիածնի հասցեով ստացվող արտասահմանյան հայկական թերթերը, ամսագրերը և այլ գրականությունը:

²⁷ Նույն տեղում, թ. 19:

²⁸ ՆՊԱ, ֆ. 823, ց. 3, գ. 110, թ. 58:

Մենք սկսեցինք նրան տալ արտասահմանյան առաջադեմ և եկեղեցական հրատարակությունները: Մակայն նա կրկին դիմեց Խորհրդին թույլ տալ անձամբ կարդալու նաև թշնամական մամուլը: Ըստ որում, անմիջապես ասաց, որ եթե թշնամական գրականությունը չի կարելի դուրս բերել Խորհրդի տարածքից, ապա ինքը պատրաստ է գալ և կարդալ այդ գրականությունը մեզ մոտ՝ Խորհրդում:

Նկատի ունենալով այն, որ թշնամական հրատարակությունները նրան կարդալ տալուց հրաժարվելու դեպքում Կաթողիկոսի կողմից կդիտվի որպես իր նկատմամբ անվստահության արտահայտություն, Հայ եկեղեցու գործերի խորհուրդը հնարավոր է համարում բավարարելու Կաթողիկոսի խնդրանքը: Ընդ որում, դաշնակցական թերթերի առանձին համարներ, որոնցում կլինեն խիստ չարամիտ հարձակումներ մեր դեմ, կարելի կլինի ցույց չտալ Կաթողիկոսին, պատճառաբանելով, որ այդ համարները չեն ստացվել:

Զեկուցելով վերոշարադրյալը խնդրում եմ Ձեր ցուցումները:

Խորհրդի նախագահ Հ. Գրիգորյան»²⁹:

Փաստաթղթին շեղակի մակագրված է. «Ընկ. Նիկիֆորովան (ՀԽՍՀ նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Բ. Մարտիրոսյանի օգնականը – Ս. Ա.) հեռախոսով հայտնեց, որ ընկ. Մարտիրոսյանը խնդրել է հաղորդել, որ համաձայն է մեր առաջարկության հետ:

Հր. Գրիգորյան»:

Միջնորդագրերից երկրորդում, որն ուղղված էր ՀԽՍՀ կառավարության նախագահին, ՀԵԳԽ-ի նախագահը նպատակահարմար էր գտնում կաթողիկոսի մոտ առաջացած «կասկածներն ու տատանումները» փարատելու համար «Չտապ իրագործել ծայր աստիճանի անհրաժեշտ» մի շարք միջոցառումներ: Դրանցից կարևորվում էին մանավանդ առաջին երկուսը.

1. «Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել ընկ. Բուլգանինին հասցեագրած Կաթողիկոսի նամակում բարձրացված բոլոր հարցերի շուտափույթ լուծման համար:

2. Թույլ տալ Կաթողիկոսին հրապարակելու «Էջմիածին» ամսագրում ընկ. Ն. Ա. Բուլգանինին հասցեագրած առաջին նամակը»³⁰:

Բուլգանինի տված խոստումների կատարման համար Կաթողիկոսի երկարատև պայքարը չհանգուցալուծված, Բուլգանինը պաշտոնազրկվեց: ԽՍՀՄ - կառավարության նախագահի աթոռը զբաղեցրեց ԽՄԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Ն. Ա. Խրուշչովը, որի ձեռքում կենտրոնացան իշխանության բոլոր լծակները:

Բուլգանինի պաշտոնազրկումից հետո, նրա տված խոստումների կատարման հետ հույսեր կապելն այլևս անիմաստ էր: Ամենայն Հայոց Հայրապետը կանգնում է անելանելի նույն խնդրի առջև, որի դիմաց մեկ տասնամյակ առաջ կանգնել էր իր նախորդը՝ ի նչ անել, եթե չեն կատարվում անգամ գերհզոր տերության առաջին դեմքերի խոստումները: Ելքը դարձյալ նույնն էր, միակը.

²⁹ Նույն տեղում, թ. 1:

³⁰ Նույն տեղում, թ. 56:

պետք էր շարունակել պայքարը և ինչ գնով էլ լինի հասնել տրված խոստումների կատարմանը: Ինչ գնով լինի՝ շարունակել բարձրացնել հայկական հողերի վերադարձման խնդիրը, այն չմատնել մոռացության: Հիասթափված, հուսախաբված լինելով, չհուսահատվել:

Այժմ արդեն Վազգեն Առաջինի ծրագրերի իրականացումը կախված էր բացառապես ԽՍՀՄ գերագույն նոր իշխանավորի՝ ԽՍՀՄ կառավարության նոր նախագահ Ն. Ս. Խրուշչովի, որը միաժամանակ գլխավորում էր նաև ԽՄԿԿ - կենտկոմը, «բարյացակամությունից»: Բացվում էր պայքարի նոր ասպարեզ: Հարկավոր էր, ինչ գնով էլ լինի, հանդիպել նրա հետ: Հարկավոր էր օգտվել՝ «ԽՍՀՄ ղեկավարության հետ նոր հանդիպումների անհրաժեշտություն առաջանալու դեպքում առանց երկմտելու Խորհրդային կառավարությանը դիմելու» բարի խորհրդից, որ Բուլզանինը տվեց Վեհափառին հրաժեշտի պահին:

1958 թ. ապրիլի 11-ին կաթողիկոսը նամակով դիմում է ՀԵԳԽ-ի նորանշանակ նախագահ Ս. Գասպարյանին, որն այդ պաշտոնում փոխարինել էր Հր. Գրիգորյանին, խնդրելով՝ «...հարգո Խորհրդին պատշաճը կարգադրելու, որպեսզի Մենք հնարավորություն ունենանք անձամբ տեսակցելու ԽՍՀՄ Մինիստրների Սովետի նախագահ մեծարգո պարոն Ն. Խրուշչովի հետ»³¹: Վազգեն Առաջինը նշում էր, որ տեսակցության նպատակն է խնդրել «պարոն վարչապետի բարեհաճ աջակցությունը լուծելու համար Հայաստանյազ եկեղեցու հետ կապված մի քանի ներքին և արտաքին բնույթի հարցեր»: Այդ հարցերը նա շարադրել էր մի ընդարձակ՝ 8 էջ կազմող, նամակ-դիմումի մեջ, որի պատճենը ներկայացրել էր ՀԵԳԽ-ի նախագահին:

Նույն թվականի մայիսին, լինելով Մոսկվայում, կաթողիկոսը դիմում է նաև ԿԴԳԽ-ի նախագահ Ա. Պուզինին, խնդրելով նրա աջակցությունը Ն. Խրուշչովի հետ տեսակցություն կազմակերպելու գործում: Վերջինս խոստանում է «մոտ ապագային լուծել այդ հարցը»³²: Սպասումները սակայն չեն արդարանում. Պուզինը չէր պատրաստվում աջակցել այդպիսի տեսակցության կազմակերպմանը:

Հուսախաբ կաթողիկոսը երկու ամիս անց՝ հուլիսի 8-ին, ստիպված է լինում կրկին դիմել ՀԵԳԽ-ի նախագահին՝ կրկին խնդրելով «ամեն ջանք գործադրել, որպեսզի առաջիկա մեկ ամսում Մենք հնարավորություն ունենանք տեսակցելու մեծարգո պրն. Ն. Խրուշչովի հետ և անձամբ ներկայացնելու եկեղեցական հարցերին վերաբերող մեր խնդրանքները»³³:

Բայց վարագույրի հետևում արդեն ամեն ինչ վճռված էր. Վազգեն Առաջինի տեսակցությունը Խրուշչովի հետ չէր կայանալու: Գլխավոր պատճառը Ամենայն Հայոց կաթողիկոսի առաջ քաշած հարցերի բնույթն էր, հարցեր, որոնք, ինչպես նախկինում, չէին պատրաստվում քննարկման դնել ԽՍՀՄ իշխանությունները: Բացի Էջմիածնին հուզող կենսական նշանակություն ունեցող գուտ եկեղեցական հարցերից, ինչպիսիք էին, ասենք՝ արտասահմանյան թեմերում

³¹ ՆՊԱ, ֆ. 823, ց. 3, գ. 150, թ. 31:

³² Նույն տեղում:

³³ Նույն տեղում:

ստեղծված իրավիճակը, նախկինում փակված հայ եկեղեցիների վերաբացման, Ս. Էջմիածնում 2-3 տարին մեկ եպիսկոպոսական ժողովների գումարման, արտասահմանից հյուրերի և ուխտավորների ընդունման, արտասահմանյան թեմեր այցելությունների անհրաժեշտության հարցերն էին, Վազգեն Առաջինը աննահանջ հետևողականությամբ ու համառությամբ շարունակում էր բարձրացնել համահայկական նշանակության խնդիրներ՝ սփյուռքահայության նոր հայրենադարձության կազմակերպման, Ադրբեջանական ու Վրացական խորհրդային հանրապետությունների կազմում անարդարացիորեն ընդգրկված հայկական տարածքները Հայկական ԽՍՀ հետ վերամիավորելու հիմնահարցերը: «...Շատեր արտասահմանի մեջ, – գրում էր նա իր նամակում, – հայ ժողովրդի մայր հայրենիք վերադառնալու հարցը կապում են Հայաստանի տերիտորիան իր բնական ու արդար սահմանների մեջ դնելու հարցին հետ: Նրանք նշում են Թրքահայաստանի հողերի խնդիրը, նրանք նշում են մանավանդ Ղարաբաղ – Նախիջևան – Ախալքալաքի հայկական հողամասերու խնդիրը, ասելով, որ եթե առաջինը միջազգային քաղաքական բարդ իրադրությանց հետ կապված լինելով, դժվար է այսօր նրա լուծման ճանապարհ տեսնել, ապա երկրորդը ներքին կարգադրության հարց է»³⁴: Սեփական մտածումները, ձգտումներն ու ցանկությունները բացառապես սփյուռքահայությանը վերագրելով և սփյուռքահայության խորհրդամետությունը վկայակոչելով, կաթողիկոսը ամեն կերպ ձգտում է շահագրգռել ԽՍՀՄ դեկավարությանը. «Արտասահմանի հայ ժողովուրդի իդան է, որ այս ներքին հողային հարցի դրական լուծումով, Սովետական Հայաստանի տերիտորիան վերագտնե իր պատմական, բնական սահմանները, և... սփյուռքի ժողովուրդը հնարավորությունը ունենա հայրենիք դառնալու և մասնակցելու իր նոր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի վերաշինության և վերելքին»³⁵:

Չլսված բան էր, երբ եկեղեցականը, ինչպիսի աստիճան էլ նա ունենար, այնքան հանդուգն գտնվեր, որ առանց այլևայլության խառնվեր բացառապես բարձր իշխանությունների իրավասությանը պատկանող հարցերի կարգադրմանը, խորհուրդներ տար, պահանջներ ներկայացներ... Ամենայն Հայոց կաթողիկոսի վարքագծից խորհրդային դեկավարության դժգոհության ու վրդովմունքի աստիճանը պարզորոշ արտացոլված է ԿՊԳԽ-ի նախագահ Ա. Պուզինի հեղինակած փաստաթղթերում: Այսպես, դրանցից մեկում՝ Խրուշչովին ներկայացված «Տեղեկանք՝ Հայ եկեղեցու գլխավոր Վազգեն Առաջինի բարձրացրած հարցերի մասին» փաստաթղթում ասվում էր. «Այդ բոլոր հարցերը (հայկական հողերին վերաբերող – Ս. Ա.) Վազգեն Առաջինը առաջ է քաշում մի քանի տարիների ընթացքում: Ակնհայտ է, որ ոչ մեկը իսկականից չի բացատրել նրան իր կողմից այդ կերպ ներկայացված հարցերի սխալականությունն ու վնասակարությունը»: Եվ որպեսզի ցույց տա Ամենայն Հայոց կաթողիկոսի հայացքների վնասակարությունը, բերում էր հետևյալ տվյալները, անկասկած տրամադրված անվտանգության մարմինների կողմից, ինչը մի ավելորդ ան-

³⁴ Նույն տեղում, թ. 24:

³⁵ Նույն տեղում:

գամ գալիս է ապացուցելու, որ Վազգեն Առաջինի յուրաքանչյուր քայլը, դեռևս մինչև «Վազգեն Առաջին» դառնալը՝ Ռուսինիայում գտնվելու տարիներից, առավել ևս Խորհրդային Հայաստան կատարած այցելությունների ընթացքում, աչալրջորեն վերահսկվում էին պատկան մարմինների կողմից. «Մինչև 1955 թ. Վազգեն Առաջինն ապրում էր Ռուսինիայում: ...1955 թ. ԽՍՀՄ-ում գտնվելու ժամանակ, մտերիմների նեղ շրջանում (ինչպես տեսնում ենք անվտանգության մարմինների գործակալները ամենուրեք էին, այդ թվում նշանավոր դեմքերի «նեղ շրջանում» – Ս. Ա.), Վազգենը արտահայտել է հետևյալ ոչ ճիշտ դատողությունները. «Բոլոր մեծ պետությունները ոտնահարել են հայ ժողովրդին և օգտագործել են հայ ժողովրդին իրենց իմպերիալիստական ձգտումներում: Խորհրդային Գառավարությունը անարդարացի է վարվել հայ ժողովրդի հետ, թողնելով բուն հայկական տարածքները (Նախիջևանը, Ղարաբաղը, Ախալքալաքը և այլ շրջանները) վրացիների ու ադրբեջանցիների ձեռքում: Եկեղեցուն այդ հարցում համապատասխան դեր է պատկանում»³⁶: ԿՊԳԽ-ի նախագահը համոզված էր, որ Վազգեն Առաջինը ներկայումս էլ չի ազատվել իր սխալ դատողություններից ԽՍՀՄ ազգային քաղաքականության հարցերի վերաբերյալ: Իրեն ներկայացնում է որպես հայ ժողովրդի ղեկավարը, որը կոչված է պաշտպանելու խորհրդային և արտասահմանյան հայերի շահերը ԽՍՀՄ կառավարության առջև: Պուզինն առաջարկում էր ՀԽՍՀ կառավարության և ԿՊԳԽ-ի անունից բացատրել Վազգեն Առաջինին նրա հայացքների սխալականությունը հայրենադարձության և հողերի հարցերում:

ՀԵԳԽ-ի նախագահ Գասպարյանը Հայաստանի իշխանությունների հասցեին արած Պուզինի մեղադրանքներին ի պատասխան նրան ուղղած իր նամակում գրում էր. «Հաղորդում ենք, որ միայն մեկ տարվա ընթացքում Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահը երեք անգամ ասել է նրան (կաթողիկոսին – Ս. Ա.) այն մասին, որ տարածքային հարցերի առաջ քաշումը չի մտնում Գաթողիկոսի իրավասությունների մեջ: Ամեն անգամ նա արդարանում էր հայտարարելով, որ այդ բոլոր հարցերը իր առջև դնում են արտասահմանյան հայ առաջադեմ շրջանակները և կապում են դրանք Խորհրդային Հայաստան հայրենադարձվելու հետ»³⁷: Գասպարյանը հայտնում էր, որ ինքը կաթողիկոսին ասել է նաև, որ Բուլգանինը այդ հարցերի մասին արդեն տվել է սպառիչ պատասխան, և որ Հայաստանի կառավարությունը ճիշտ չի համարում նրա միջամտելը այդ գործերին: 1957 թ. նոյեմբերի 16-ին, ՀԽՍՀ նախարարների խորհրդի նախագահի կողմից կաթողիկոսի ընդունելության ժամանակ, նրան ասվել է, որ Հայաստանի կառավարությունը գտնում է, որ նա չպետք է զբաղվի այնպիսի հարցերով, որոնք, ըստ էության, չեն մտնում նրա իրավասությունների մեջ:

ԿՊԳԽ-ի նախագահին իր հերթին նամակով տեղեկացնում էր Խրուշչովին (փաստաթղթում չի նշված ամիս - ամսաթիվը, այլ միայն տարին՝ 1958 թ.), որ Հայ եկեղեցու ղեկավար Վազգեն Առաջինը խնդրում է ԽՍՀՄ նախարարների

³⁶ Նույն տեղում, թ. 7:

³⁷ Նույն տեղում, թ. 27:

խորհրդի նախագահ Ն. Ս. Խրուշչովին ընդունել իրեն, որի ժամանակ նա պատրաստվում է խնդրել ԽՍՀՄ կառավարության օգնությունը մի շարք հարցերի լուծման գործում: Պուզինը համառոտակի թվարկում է այդ հարցերը ու հաղորդում, որ Հայկական ԽՍՀ ղեկավար մարմինները և ԿՊԳԽ-ն բացատրել են Վազգեն Առաջինին, որ դատելով այն հարցերից, որոնք նա պատրաստվում է առաջ քաշել, չկա հատուկ անհրաժեշտություն ԽՍՀՄ կառավարության ղեկավարի կողմից նրա ընդունելության: Հարցերի մի մասն արդեն լուծված է կամ կլուծվի մոտ ժամանակներում, մյուս հարցերը պահանջում են ոչ թե լուծում, այլ բացատրություն: «Սակայն Վազգեն Առաջինը համառոտ են խնդրում է Ձեր կողմից ընդունվելու իր ցանկության մասին», – եզրափակում էր նամակը Պուզինը:

Դատելով Գասպարյանին հասցեագրած Պուզինի 1958 թ. հուլիսի 15-ի շտապ հեռախոսագրի բովանդակությունից, Խրուշչովը, նկատի առնելով Ամենայն Հայոց կաթողիկոսի առաջ քաշած հարցերի բնույթը, որոնց նա պատրաստ չէր հստակ պատասխան տալ, մերժել էր նրան ընդունել³⁸: Հեռախոսագրի սկզբում Պուզինը դիվանագիտորեն լավ լուրեր էր հաղորդում. հայտնում էր, որ դրականորեն է լուծվել Վազգեն Առաջինի 50-ամյակը նշելու հարցը, և որ մոտ օրերս կլուծվի նաև Հայ եկեղեցու եպիսկոպոսների հավաքի խնդիրը: Ինչ վերաբերում է Խրուշչովի կողմից Վազգեն Առաջինի ընդունելության հարցին, ԿՊԳԽ-ի նախագահը խնդրում էր հաղորդել կաթողիկոսին հետևյալը. «Այն հարցերը, որ դնում է Խորհրդային Կառավարության առջև Վազգեն Առաջինը կարող են լուծվել սովորական կարգով՝ կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի միջոցով: Այդ հարցերի մի մասը լուծված է: Մյուս հարցերը կլուծվեն մոտ ժամանակներս: Այդ կապակցությամբ անհրաժեշտություն չկա Կառավարության ղեկավարի կողմից նրա ընդունելության: Ըստ որում պետք է հաշվի առնել Խորհրդային Կառավարության ղեկավարի զբաղվածությունը պետական կարևոր գործերով: Այդպիսով, ընկ. Խրուշչովի մոտ Վազգեն Առաջինի ընդունելությունը չի կայանա, որի մասին խնդրում ենք Ձեզ պաշտոնապես հայտնել Վազգեն Առաջինին»:

Մեծ հայրենասերը հուսաբեկված էր այլևս: Այն ծրագրերը, որ նա փայփայտում էր իրագործել գիտակցական ողջ կյանքի ընթացքում, որոնք հասանելի էին թվում մանավանդ Ամենայն Հայոց կաթողիկոսի գահը ստանձնելուց հետո, անհասանելի մնացին... Իսկ Հայ առաքելական եկեղեցին շարունակում էր խարխալել խորհրդային իշխանությունների կողմից ի սկզբանե գործած սարդոստայնում: Կոմունիստական վարչակարգի մայրամուտից մի քանի տարի առաջ անգամ Հայ եկեղեցու կապանքները չէին թուլացել, եկեղեցու նկատմամբ պետության վերաբերմունքը չէր փոխվել: Ի հաստատումն ասվածի, կարելի է բերել Վազգեն Առաջինին առնչվող մի ամենատիպական խնդրի լուծման գործընթացի պատմությունը: Այն հետաքրքիր է ամենից առաջ նրանով, որ եկեղեցուն վերաբերող ընթացիկ ամենապարզ հարցերի լուծումը շարունակում էր մնալ բացառապես իշխանությունների իրավասությունների շրջանակում և թե

³⁸ ՆՊԱ, ֆ. 823, ց. 3, գ. 150, թ. 26:

յուրաքանչյուր նման հարցի լուծումն անգամ բազմաստիճան ինչպիսի բյուրոկրատական խոչընդոտներ պետք է կարողանար հաղթահարել:

1985 թ. ապրիլի 1-ին, Կաթողիկոսարանը գրավոր դիմում է ՀԵԳԽ-ին՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի գահակալման 30-ամյա տարելիցը լրանալու կապակցությամբ, թույլ տալ հրատարակելու Վազգեն Առաջինի մասին քառահատոր կենսագրական ակնարկներ: Քանի որ ՀԵԳԽ-ն իրավասու չէր նման հարցերը լուծել առանց կուսակցական և պետական վերադաս մա րմինների թույլտվության, ՀԵԳԽ-ն Կաթողիկոսարանի նամակի հիմքով նույն օրը համապատասխան միջնորդագրով դիմում է ՀԿԿ կենտկոմին³⁹: Միջնորդագիրը կենտկոմի գաղափարական հարցերով քարտուղարի կողմից մակագրվում է կենտկոմի պրոպագանդայի ու ազիտացիայի բաժնին՝ առաջարկություն ներկայացնելու հանձնարարականով: Բաժինը ուսումնասիրում և համապատասխան հիմնավորումով ներկայացնում է իր եզրակացությունը. «Հայկական ԽՍՀ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհուրդը դիմել է ՀԿԿ կենտկոմ Կաթողիկոս Վազգեն Առաջինի մասին կենսագրական ակնարկներ հրատարակելու Էջմիածնի Կաթողիկոսարանի խնդրանքը բավարարելու միջնորդությամբ:

Ժողովածուում նախատեսվում է ընդգրկել... խորհրդային կառավարության խաղաղասիրական քաղաքականությունը, ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամական ընտանիքում Հայաստանի նվաճումները պրոպագանդող Հայկական եկեղեցու հայրենասիրական գործունեությունն արտացոլող կաթողիկոսի փաստաթղթերն ու կոնդակները:

ՀԿԿ կենտկոմի պրոպագանդայի և ազիտացիայի բաժինը հնարավոր է համարում համաձայնություն տալ միջնորդությանը»⁴⁰:

Այսքանից հետո միայն հարցը դրվում է ՀԿԿ կենտկոմի բյուրոյի քննարկմանը: 1985 թ. մայիսի 5-ին ընդունվում է ՀԿԿ կենտկոմի բյուրոյի հետևյալ որոշումը. «Թույլատրել ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդին համաձայնություն տալու Էջմիածնի Կաթողիկոսարանի կողմից Կաթողիկոս Վազգեն Առաջինի մասին կենսագրական ակնարկների հրատարակմանը, չորս հատորով, տպաքանակ 4000 օրինակ»⁴¹:

Ուշադրության է արժանի այն փաստը, որ ՀԿԿ կենտկոմի բյուրոյի սույն որոշումը դասվել է ամենագաղտնագրված փաստաթղթերի շարքը: Այն տպվել է նման փաստաթղթերի համար նախատեսված կարմիր ընդգծված տպատառերով շարված՝

«ԽԻՍ ԳԱՂՏՆԻ, ՀԱՏԿԱՊԵՍ ԿԱՐԵՎՈՐ, («Հատուկ թղթապանակ») գրիֆ ունեցող հատուկ ձևաթղթի վրա, որի ձախ լուսանցքի երկայնքով, դարձյալ կարմիր տպատառերով, արված է նս մի հատուկ նշում՝ «Ենթակա է վերադարձման ՀԿԿ կենտկոմի ընդհանուր բաժին (1-ին սեկտոր) եռօրյա ժամկետում»:

³⁹ Հասարակական-քաղաքական պատմության արխիվ, ֆ. 1, ց. 126, գ. 11, թ. 33:

⁴⁰ Նույն տեղում, թ. 32:

⁴¹ Նույն տեղում, թ. 31:

Խնդրի լուծումը սակայն այս որոշմամբ չի ավարտվում: Մեկ ամիս անց ՀԵԳԽ-ն դարձյալ դիմում է ՀԿԿ կենտկոմ՝ նախորդ որոշման մեջ փոփոխություններ կատարելու միջնորդությամբ. «Ի լրացումը 1985 թ. ապրիլի 1-ի մեր նամակի, հայտնում ենք, որ չնայած Կաթողիկոսարանի միջնորդությանը՝ «Կաթողիկոս Վազգեն Առաջինի մասին կենսագրական ակնարկներ» չորս հատորով հրատարակելու վերաբերյալ, գտնվել է նպատակահարմար հրատարակությունը սահմանափակել երկու հատորով»⁴²:

Այս նոր նամակը անցնում է նույն ճանապարհը, ինչ նախորդը և արդյունքում ծնվում է ՀԿԿ կենտկոմի բյուրոյի մի նոր որոշում: Այն առաջինից տարբերվում էր մի էական հավելումով, որը, թերևս, կարող է օգնել հասկանալու նախորդ որոշման փոփոխման պատճառը. «Ի փոփոխումը Հայաստանի կոմկուսի կենտկոմի բյուրոյի 1985թ. մայիսի 5-ի որոշման, թույլատրել Հայկական ԽՍՀ Մինիստրների սովետին առնչվող Հայ եկեղեցու գործերի խորհրդին համաձայնություն տալու Կաթողիկոս Վազգեն Առաջինի մասին կենսագրական ակնարկների հրատարակմանը երկու հատորով՝ ի հաշիվ Կաթողիկոսարանի թղթի և ֆինանսական միջոցների, Հայկական սփյուռքում տարածելու համար»⁴³:

Պետք է ենթադրել, որ Էջմիածինը նախապես համոզված էր, որ քառահատորի հրատարակումը պետք է իրականացվեր պետական միջոցների հաշվին, բայց հուսախաբ լինելով, և սեփական սուղ միջոցները խնայելու նպատակով, ստիպված է եղել ակնարկների հրատարակումը սահմանափակել երկու հատորով: Նույն այդ պատճառով, ՀԿԿ կենտկոմի բյուրոն իր նոր որոշումը հստակեցրել էր այն աստիճան, որ ակնարկների հրատարակման ծախսերի հարցում ոչ մի տարակարծություն չառաջանա:

Ինչ հետևության կարելի է հանգել վերոշարադրյալից: Ամենից առաջ այն, որ Էջմիածնի գործունեությունը շարունակում էր մնալ կոմունիստական վարչակարգի խիստ հսկողության տակ: Անգամ Ամենայն Հայոց կաթողիկոսի գրական ժառանգության հոբելյանական հրատարակումը սեփական միջոցներով, որը պետությունից բաժանված եկեղեցու բնականոն իրավունքն էր, չէր կարող իրականացվել առանց

իշխանությունների հատուկ թույլտվության: Ինչ վերաբերում է իշխանությունների ցուցաբերած «խնայողական» վերաբերմունքին կաթողիկոսի նույն այդ գրական ժառանգության հրատարակման ծախսերի հարցում, ապա այն ամենին էլ խնայողության նկատառումներից չէր թելադրվում, եթե նկատի ունենանք, որ այդ նույն ժամանակներում հրատարակչական գործի վրա նյութական վիթխարի միջոցներ էին ծախսվում և երբ տպագրված գրականության մի ահռելի մասը ժողովրդի համար ոչ մի հետաքրքրություն չներկայացնող ազիտ-պրոպագանդիստական բնույթի նյութերն էին, որոնք, ի վերջո, վեր էին անվում թափոնի: Միակ շարժառիթը՝ ի սկզբանե բոլշևիկյան իշխանապետության գաղափարաբանության հիմքում ներդրված և շարունակաբար հետևողականորեն

⁴² Նույն տեղում, թ. 45:

⁴³ Նույն տեղում, թ. 44:

իրականացվող եկեղեցու ազդեցության ըստ ամենայնի թուլացման ու նրա գործունեության շրջանակների սահմանափակման հիմնական սկզբունքներից մեկն էր, որին չհետևել չէին կարող նաև Հայաստանի իշխանությունները: Եվ պատահական չէր, որ ՀԿԿ կենտկոմի բյուրոյի վերը բերված երկրորդ որոշման մեջ այն կայացնողները շտապել էին շտկել առաջին որոշման մեջ թույլ տված բացթողումը՝ շեշտված ձևով ավելացնելով «...ի հաշիվ Կաթողիկոսարանի թղթի և ֆինանսական միջոցների, Հայկական սփյուռքում տարածելու համար»: Մի ավելորդ անգամ ևս ուշադրություն դարձնենք վերջին ձևակերպմանը՝ Վազգեն Առաջինի կենսագրական ակնարկները պետք է տարածվեին միայն «Հայկական սփյուռքում», որտեղ Էջմիածնի ազդեցության ուժեղացումը քաղաքական նկատառումներով խիստ շահեկան էր խորհրդային իշխանությունների համար, բայց ոչ Հայաստանում և ԽՍՀՄ տարածքներում:

Քառահատորը, այսուհանդերձ, լույս ընծայվեց, բայց հայտնի պատճառով նրա հրատարակումը ձգվեց ուղիղ 25 տարի՝ 1958-1983 թթ.:

КАТОЛИКОС ВСЕХ АРМЯН В АЗГЕН ПЕРВЫЙ
И СОВЕТСКИЕ ВЛАСТИ
(К 100-летию со дня рождения)

СЕРАК АМИРЯН

Р е з ю м е

30 сентября 1955 г. созданный в Эчмиадзине Национально-церковный Собор избрал Верховным Главой Армянской Апостольской церкви Главу Румынской и Болгарской епархии Епископа Вазгена Палчяна, получившего почетный духовный титул Вазген Первый. Плачевное наследство досталось новоизбранному Католикосу. До революции Эчмиадзинская конгрегация состояла из 300 человек, в их числе было 20-30 епископов. К середине 1950-х годов Католикосат состоял из трех лиц – самого Католикоса и двух епископов. До революции на территории СССР Эчмиадзин имел до 900 церквей. Ныне число их не превышает 30-и. В крайне тяжелом состоянии находилось материальное положение Католикосата, который не был в состоянии даже содержать Духовную Академию и журнал “Эчмиадзин”. Эти и ряд других проблем, ждущих своего неотложного решения, стояли перед Вазгеном Первым с первых дней его деятельности. Основной ключ к решению этих проблем, однако находился в руках не Эчмиадзина, а высших советских властей. Преодолев огромные трудности, Вазгену Первому удается 12 мая 1956 г., непосредственно после возвращения из зарубежной поездки, встретиться с Председателем Совета Министров СССР Н. А. Булганиным, предварительно пройдя через мытарство согласований с республиканскими властями и органами, осуществляющими государственный надзор над Армянской церковью. Премьеру Булганину Н. А. было представлено два письма-послания, первое из которых, заранее прошедшее через цензуру властей, содержало семь просьб, касающихся проблем Армянской церкви. На все эти просьбы был получен положительный ответ. Второе письмо было составлено после возвращения из-за границы за два-три дня перед встречей. В нем были изложены “думы и чаяния зарубежных армян” и “нес-

колько вопросов, также волнующих” Католикоса. Эти вопросы относились к передаче Советской Армении исконно армянских земель, в свое время несправедливо отторженных от Армении и включенных в состав Азербайджана (Нахичеванская республика и Нагорный Карабах) и Грузии (Ахалакалакский район), и возобновлению репатриации зарубежных армян в Советскую Армению. Эти вопросы дипломатично были отвергнуты: “...я сомневаюсь, чтобы целесообразно было эти вопросы сейчас ставить и разрешить”. Встреча Вазгена Первого с Н. А. Булганиным, которая получила большой положительный резонанс как в Армении, так и среди зарубежных армян, не имела таких же положительных последствий. Время показало, что и те вопросы, на которые был получен положительный ответ, несмотря на все приложенные старания Католикоса, после отставки Н. А. Булганина, в большинстве своем не были осуществлены. Католикос Всех Армян был вынужден добиваться новой встречи, теперь уже с новым хозяином Кремля – Н. С. Хрущевым. Но и эти усилия ни к чему не привели. Все настойчивые просьбы, послания были безрезультатны. Опека над Армянской церковью со стороны властей, даже перед закатом СССР, оставалась такой же жесткой и всеобъемлющей, как и прежде: чтобы издать юбилейное литературное наследие Вазгена Первого на свои же средства, Эчмиадзину необходимо было получить разрешение властей на самом высоком уровне – на уровне Бюро ЦК КП Армении. Католикос Всех Армян не имел права читать зарубежную армянскую прессу без получения такой же санкции сверху.

CATHOLICOS OF ALL ARMENIANS VAZGEN THE FIRST
AND THE SOVIET POWERS
(To the 100th birth anniversary)

SERHAK AMIRYAN

S u m m a r y

On September 30, 1955 National Synod convened in Echmiadzin elected Bishop Vazgen Palchyan – head of Romanian and Bulgarian diocese – head of the Armenian Apostolic Church for which he received honorary ecclesiastical title Vazgen the First. The heritage he received was deplorable. Before the revolution Echmiadzin congregation had 300 people including 20-30 bishops and 900 churches all over the USSR. By the mid – 1950s it had only three persons – the Catholicos himself and two bishops and about 30 churches. The financial state of the Congregation was too terrible. It was unable to support Ecclesiastical Academy and “Echmiadzin” magazine. This problem along with others requiring urgent solution was from the very first days of his activities before Vazgen I. However, the main key for solving the problems was not with Echmiadzin but with the highest Soviet authorities. On May 12, 1956 having overcome great difficulties Vazgen I just after returning from a foreign trip succeeded to meet N.A. Bulganin – Chairman of the Council of Ministers of the USSR. But before that he had previously to go through ordeal of agreements with republican authorities and bodies performing state supervision over the Armenian church. Two letters-messages were submitted to Prime Minister N.A. Bulganin: one of them having passed the censorship of the authorities contained seven requests concerning the problems of the Armenian church. Positive answer was given to these requests. The second letter was drawn up two-three days before the meeting after returning from the trip. “Thoughts and

hopes of Armenian Diaspora” and “some issues also worrying” Catholicos were stated in it. These issues referred to giving back to the Soviet Armenia the primordial Armenian lands which time ago were unjustly torn away from Armenia and included in Azerbaijan (Republic of Nakhichevan and Nagorny Karabakh) and in Georgia (Akhalkalak District) and to resuming repatriation of Armenians from abroad to the Soviet Armenia. But they were rejected diplomatically: “ I doubt that it is reasonable to raise and solve these issues now”. Meeting of Vazgen I with N. A. Bulganin which had positive resonance both in Armenia and Armenian Diaspora did not have any positive consequences. Even those issues which were given positive answers were not realized in their majority in spite of all efforts exerted by Vazgen I after resignation of N. A. Bulganin. Supreme Patriarch and Catholicos of All Armenians had to strive for a new meeting – now with the new boss of the Kremlin – N.S.Khrushcheyev. But these efforts also resulted in nothing. Even before the dissolution of the USSR wardship over the Armenian church remained as strict and comprehensive as before: in order to publish jubilee literary heritage of Vazgen I with its own means Echmiadzin had to get permission of the authorities at the highest level – Bureau of the Central Committee of the Communist Party of Armenia. Supreme Patriarch and Catholicos of All Armenians had no right to read foreign Armenian press without getting permission from the above Bureau.